ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2401 «ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ (ԸՍՏ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 2401 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 2401 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) կառավարիչ ՝ տրանսպորտային փոքր կազմակերպության,

2) տեխնիկ՝ ավտոտրանսպորտային փոխադրումների կազմակերպման

3) կարգավար՝ տրանսպորտային գործունեության

4) գործակալ՝ տրանսպորտային կազմակերպության,

5) ծառայող՝ գրասենյակային, ուղեբեռի ուղեկցման:

7. Միջին մասնագիտական կրթության 2401 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) տրանսպորտի գործունեությունը կազմակերպելը, ծրագրելը և համակարգելը,
2) նվազագույն ծախսերով համապատասխան ծառայությունները բարձր որակով մատուցելու ընթացիկ գործունեությունը կազմակերպելը,
3) մատակարարող, պատվիրատու և այլ կազմակերպությունների հետ բանակցություններ վարելը,
4) մեքենաշինության բնագավառի տեխնիկական գիտելիքները, սկզբունքները և գործող կանոններին և մասնագրերին համապատասխան,
6) սարքավորումների աշխատանքի, պարապուրդների պատճառների և տևողության հաշվառում վարելը, նորոգման համար անհրաժեշտ նյութեր, պահեստամասեր, մանրամասեր և գործիքներ ստանալու հայտեր կազմելը,
7) տրանսպորտային միջոցների բեռնման-բեռնաթափման, բեռի ամրացման տեսչական ստուգումների ժամանակ անվտանգության կանոնների և չափորոշիչների պահպանումը հսկելը,
8) նյութական, ֆինանսական և աշխատանքային միջոցների արդյունավետ օգտագործելը և հսկելը, արտադրական գործունեության արդյունքները գնահատելը և մատուցվող ծառայությունների որակը գործնական փորձը աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար կիրառելը,

5) աշխատանքների որակն ապահովելու համար սարքավորումների, մեխանիկական համակարգերի և մեքենաների շահագործման և նորոգման տեխնիկական հսկողություն ապահովելը՝ հսկելը,

9) առաջնային և փոխադրման փաստաթղթերով սակագին որոշելը, արդյունքները հաշվելը՝ ըստ յուրաքանչյուր փաստաթղթի,

10) տրանսպորտային միջոցների և տրանսպորտային փոխադրումների հաշվառման ոչ բարդ հաշվարկներ կատարելը,

11) տրանսպորտային գործունեության օպերատիվորեն կարգավորելը, առաջադրանքների կատարման ժամկետները հսկելը,

12) ստանդարտային և հավաստագրային (սերտիֆիկատային) փորձարկումներինմասնակցելը,

13) տրանսպորտային ընթացքի խախտումների, կատարված խախտումների հետևանքների վերացման միջոցառումներ իրագործելը,

14) տրանսպորտային այլ կազմակերպությունների տրանսպորտային բաժիններում (ծառայություններում) փոխադրումներ կազմակերպելը և կառավարելը,

15) ամենօրյա աշխատանքների անխափան իրականացնելը՝ երթուղիների ընտրելը, փոխադրման գրաֆիկների մշակելը, շարժակազմի աշխատանքի հսկելը,

16) գործերի վիճակի, առաջադրանքների կատարման փուլերի և ժամկետների, սարքավորման աշխատանքի մասին անհրաժեշտ տեղեկություն տրամադրելը,

17) տրանսպորտային ծառայությունների և տեխնոլոգիական գործընթացների որակի հսկելը:

18) տրանսպորտային միջոցների և սարքավորումների անվտանգ շահագործում ապահովելը բովանդակությաբ կից պարտականություններ կատարելը: